Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կարգապահական հանձնաժողովի 09.09.2024թ թիվ 05 արձանագրության «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների հավելված 6.2-ի հատուցման գործընթացների ժամկետներ, «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոնների 53-րդ կետի պահանջները խախտելու համար ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով: